

Ս. ԶԱՏԻԿԸ ՍՅՈՒՆՅԱՑ ԹԵՄՈՒՄ

Ապրիլի 2-ին, ժամը 10-ին, Ս. Էջմիածնի Մայր Աթոռից, Վեհափառ Հայրապետի օրհնությամբ և գերշ. Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի գլխավորությամբ, սկսեցինք մեր ուղևորությունը դեպի Սյունյաց աշխարհ, որտեղ Սրբազան Հայրը պետք է օծեր Գեղանուշի Ս. Հռիփսիմեի խորանը ու Զատկական տոնի առթիվ պատարագ մատուցեր:

Ճուրջ հիգժամյա մերթ հարթ ու ողորկ, մերթ էլ լեռների ու անտառների միջով ձգվող ճանապարհ կտրելուց հետո, հասանք Սյունիքի արծվաբույնը՝ Գորիս, որտեղի հյուրանոցում էլ իջևանեցինք: Գերաշնորհ Սրբազան Հորը այստեղ դիմավորեց Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տ. Աբրահամ վրդ. Մկրտչյանը: Հյուրանոցում հանգստանալուց հետո, հայր Աբրահամի և Գորիսի քաղաքագլուխ մեծարգո Ս. Հարությունյանի ուղեկցությամբ շարժվեցինք քաղաքի գործարար անձանցից մեկի՝ Պ. Բալասանյանի տուն՝ հարգելով տանտիրոջ հրավերը: Հյուրամեծար տանտերը, սիրալիր ընդունելություն ցույց տալուց ու Ճրագալուցի հատուկ կերակրատեսակներ մատուցելուց հետո, շնորհակալություն հայտնեց Ներսես Սրբազան Հորը՝ այս շնորհաբեր այցելության համար: Ապա Սրբազան Հայրը իր տված օրհնության հետ նաև մեկական Մանկական Աստվածաշունչ, Աստվածաշունչ ու Նոր Կտակարան նվիրեց ընտանիքին:

Հաջորդ՝ Քրիստոսի հրաշափառ Հարության օրը անհամեմատ ավելի էր հագեցված ծրագրերով: Թեև մեր գնացած ու դրան նախորդած երկու օրերում առատ ձյուն էր տեղացել, սակայն Զատիկի օրն սկսվեց արևոտ ու պայծառ:

Դեռևս ժամը 8-ն էր, երբ ավտոմեքենան շարժվեց դեպի Կապանի Գեղանուշ գյուղի ուղղությամբ: Այս գյուղի Ս. Հռիփսիմե տաճարի նորակառույց խորանը պետք է օծվեր ու նրա վրա առաջին անգամ պատարագ մատուցվեր: Լեռնանցքներով, ոլորապտույտ վայրէջքներով ու վերելքներով ճանապարհը հաղթահարելուց հետո, հասանք հիշյալ գյուղ: Ճանապարհին ամպերի ետին ուրվագծվում էր Կապանի խորհրդանիշը՝ Խուստուփ փառավոր լեռը:

Գեղանուշի ճանապարհին հանդիպում էինք սյունեցիների հոծ խմբերի, որոնք շտապում էին եկեղեցի:

Եկեղեցի հասնելուն պես մեզ դիմավորեց հոգևոր հովիվը՝ Տ. Եսայի քահանան: Տեր Հոր տված տեղեկություններից իմացանք, որ Ս. Հռիփսի-

մեի տաճարը կառուցվել էր 19-րդ դարում, իսկ վերանորոգման աշխատանքները ղեկավարվել են ճարտարապետ Ռ. Կամոյանի կողմից:

Ապա ժամը 11-ին սկսվեց՝ նախ խորանի օծման կարգը, հետո ս. պատարագի արարողությունը: Այս ընթացքում եկեղեցում հավաքվել էր կապանցիների խուռներամ բազմություն: Ս. պատարագի ավարտից առաջ, պատարագիչ Սրբազանը հավուր պատշաճի ոգեշնչող քարոզ խոսեց, որով կապանցիներին լուսաբանեց Քրիստոսի Հարության խորհուրդն ու նշանակությունը և կոչ արեց՝ անմնացորդ ջանադրությամբ նպաստել իրենց հայրերի հավատքի վերընձյուղմանը: Կապանցիները ցնծությամբ լսեցին և ընդունեցին Սրբազան Հոր պատվիրանները:

Արարողության ավարտից հետո ժողովրդին բաժանվեցին պատկերազարդ օրացույցներ՝ Հայաստանի Աստվածաշնչային ընկերության կողմից տրամադրված, ու «Բեմ Եկեղեցվո» թերթեր՝ Ս. Էջմիածնից բերված:

Տաճարում արարողությանը ներկա էր նաև Կապանի շրջխորհրդի նախագահ տիար Ս. Հայրապետյանը:

Զատկի օրվա առթիվ տեղի իշխանությունների նախաձեռնությամբ կազմակերպվել էր գեղեցիկ միջոցառում: Սակայն սա դեռ բոլորը չէր: Գորիսցիների ցանկությանն ընդառաջելով, Սրբազան Հայրը պատրաստակամություն հայտնեց Գորիսի մշակույթի դահլիճում հանդիպել նրանց հետ: Ուստի ժամը 18-ին այստեղ հավաքվել էին տարբեր տարիքի ու սեռի բազմաթիվ գորիսեցիներ: Հանդիպման կայացմանը մեծապես նպաստել էր քաղաքագլուխը՝ մեծարգո Ս. Հարությունյանը, որը և բացման բովանդակալից խոսք ասաց:

Ապա խոսք տրվեց Սրբազան Հորը, որը կրկին անգամ շեշտեց օրվա խորհրդի նշանակությունը ինչպես մեր ազգային, այնպես էլ ողջ մարդկության պատմության մեջ, անդրադարձավ գորիսեցիների՝ իրենց ազգային արմատներին ու ավանդներին վերադառնալու անհրաժեշտությանը: Սրբազան Հայրը խորհուրդ տվեց նաև, որ զգույշ լինեն «Գառի կերպարանք ունեցող աղանդավոր գայլերից», որոնք մարդորսությամբ են զբաղվում, շփոթեցնում մարդկանց մտքերը: «Մենք քրիստոնեություն ընդունած հնագույն ժողովուրդն ենք, մեզ հարկ չկա կրկին քրիստոնյա դարձնելու», իր խոսքը այսպես եզրափակեց Սրբազան Հայրը:

Ապա ելույթ ունեցավ պարոն Ս. Հարությունյանը՝ հավաստիացումներով, որ գորիսեցիները ընդհանրապես միշտ էլ իրենց հավատամքը խարըսխել են ազգային ժառանգության ու քրիստոնեական գաղափարախոսության վրա: Նրանց համար միշտ բնորոշ է եղել հավտքը ոչ միայն իրենց փառավոր նախնիների՝ Անդովկ իշխանի, Օրբելյանի, Անդրանիկի ու Նժդեհի Սյունյաց լեռներում թափառող հոգիների նկատմամբ, այլև հավատքը քրիստոնեության ու Քրիստոսի պայծառ վարդապետության նկատմամբ:

Այնուհետև Սրբազան Հոր ու ներկաների միջև տեղի ունեցավ աշխույժ խաուլիս, որի ընթացքում Սրբազան Հայրը պարզաբանեց ժողովրդին հետաքրքրող մի շարք հարցեր:

Հանդիպումն ավարտվեց ջերմ ու սիրալիր քրիստոնեական մթնոլորտում: Ժողովուրդը մի շարք հոգևոր երգեր կատարեց Սրբազան Հոր գլխավորությամբ:

Երկուշաբթի առավոտյան, քանի որ մեր վերադառնալու ժամանակն էր հասել, Սրբազան Հայրը հյուրանոցի ծառայողական կազմին իր ստեղծագործությունների ժողովածուից մեկական օրինակ նվիրեց, ինչպես նաև հո-

գևոր գրքեր ու, հաջողություն մաղթելով նրանց, մեկնեցինք Ս. Էջմիածին: Վերադարձի ճանապարհին կանգ առանք Նորավանքում, ճարտարապետական այդ աքանչելի համալիրում՝ հիացումով դիտելու նրա ողջ արտաքին ու ներքին շքեղությունը: Քանի որ օրը նվիրված էր մեռելոց հիշատակին, ուստի հոգեհանգստյան պաշտոն կատարեցինք վանքի շրջակայքում թաղված բոլոր հանգուցյալների հոգվոց համար:

Խոր հուզումով ու գնահատանքով բաժանվեցինք Սյունյաց թեմից:

ՍԱՄՎԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հոգևոր ճեմարանի Դ լսարանի սան